ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

Երկարատև նստակեցության ու բնակլիմայական նպաստավոր պայմանների հետևանքով Սևանի ավազանի բնիկների մոտ զարգացած և ուշ բրոնզե դարերում բարձր զարգացման են հասնում տնտեսության մի շարք բնագավառներ, գլխավորապես անասնապահությունը, երկրագործությունը, խեցեգործությունը, մետաղամշակությունը, փայտամշակությունը և արվեստի մի շարք ճյուղեր. դա արդյունք էր անընդմեջ ու հաջորդական զարգացման։

Սևանի ավազանն առանձնապես անասնապահության համար ունեցել է նպաստավոր պայմաններ՝ ընդարձակ արոտավայրեր, խմելու ջուր։ Ինչպես հին աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ, այնպես էլ այստեղ անասնապահական տնտեսությունը հաջորդել է որսորդությանը։ Եվ, հավանաբար, նստակյաց անասնապահությանը զուգահեռ գոյություն է ունեցել նաև քոչվորական, յայլաղային անասնապահություն, որը Բ. Պիոտրովսկու կարծիքով Անդրկովկասում ձևավորվել է մ. թ. ա. II—I հազարամյակներում[1]։ Սակայն Գեղամա լեռներից հայտնաբերված ժայռապատկերների ուսումնասիրությունից պարզվում է, որ Սևանի ավազանում յայլաղային անասնապահությունը ձևավորվել է դեռևս մ. թ. ա. V հազարամյակում[2]։

Հնագիտական պեղումների ժամանակ Լճաշենի գրեթե բոլոր ժամանակների դամբարաններից գտնվել են ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասունների ոսկորներ, երբեմն նաև գանգեր[3], ազդրոսկրեր կամ խումբ-խումբ դրված կողոսկրեր։ Վերջիններս, հավանաբար, կապված են ծիսական սովորույթի, պաշտամունքի կամ տվյալ անասունի այս կամ այն մասի նախասիրության հետ։ Սևանի ավազանի մ. թ. ա. II հազարամյակի հնագիտական հուշարձաններից գտնվել են զուբրի՝ 9, եղջերուի՝ 28, վայրի այծի՝ 40, աղվեսի՝ 18, գայլի՝ 2, արջի՝ 19, վայրի խոզի՝ 34 ոսկորների մնացորդներ։ Գտածոների մեջ կան նաև կզաքիսների ամբողջական կմախքներ կամ առանձին գանգեր։

Ընտելացված կենդանիներից նույն ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերվել են խոշոր եղջերավոր անասունների 1117 կմախքի մնացորդ, ձիերի՝ 312, շների՝ 28, խոզերի՝ 97, մանր եղջերավոր կենդանիների՝ 410։

Սևանի ավազանից պատահաբար գտնվել է նաև ուղտի գանգոսկրի մնացորդ, որը վերաբերում է մ. թ. ա. III հազարամյակին։ Թեև Հայաստանի

---

[1] Б. Б. Пиотровский, Развитие скотоводства в древнейшем Закавказье («Советская археология», вып. 23, стр. 15).

[2] Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, էջ 23։

[3] С. К. Межлумян, Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972, стр. 165.

հնագույն ցեղերի զբաղմունքներից մեկն էլ եղել է ուղտաբուծությունը, սակայն չենք կարող պնդել, որ Սևանի ավազանում ուղտեր են բուծվել, քանի որ ոչ միայն անհրաժեշտ քանակի նյութեր չեն գտնվել, այլև Սևանի բնակլիմայական պայմաններն էլ ուղտաբուծության համար նպաստավոր չեն։

Լճաշենի մ. թ. ա. XIV—XII դդ. դամբարաններում գտնվել են հիմնականում երկուական, իսկ առանձին դեպքերում՝ մեկական եղան գանգեր և մեծ քանակությամբ ոսկորների բեկորներ։ Պեղածո նյութերից երևում է, որ Սևանի ավազանում անասնապահությունը զարգացած է եղել դեռևս վաղ բրոնզի դարից։ Այսպես, օրինակ, Լճաշենի №№ 6 և 14 դամբարաններից (մ. թ. ա. XXI—XIX դդ.) գտնվել են երկուական եղան գանգեր, որոնք դրված են եղել գերեզմանափոսի ճակատային պատի մոտ դնչները դեպի վեր, իսկ դրանց շրջակայքում հայտնվել են ոտքերի սրունքոսկրեր։ Անշուշտ, այս երևույթը կապված է եղել ինչ-որ սովորույթի հետ, սակայն էականն այն է, որ անասնապահությունը Լճաշենի տեղաբնիկների տնտեսության մեջ վաղուց ի վեր գրավել է առաջնակարգ տեղ, թերևս եղել է նրանց ամենագլխավոր զբաղմունքը։ Միաժամանակ նկատելի է, որ վաղ բրոնզի դարում որոշ փոփոխություններ են կատարվել խոշոր և մանր եղջերավոր անասնապահության հարաբերակցության մեջ, որը շարունակվել է նաև զարգացած բրոնզի դարում։ Այսպես, մ. թ. ա. XIII—X դդ. կրոմլեխներում, գրեթե առանց բացառության, գտնվել են մանր եղջերավոր անասունների՝ գլխավորապես ոչխարի, ոսկորներ։ Սակայն գրանցում անհամեմատ քիչ են կամ բոլորովին բացակայում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորները։ Այս առումով թերևս բացառություն են №№ 3 և 31 կրոմլեխները, որոնցում գտնվել են միայն ազդոսկրեր, իսկ № 8 կրոմլեխից՝ գանգոսկրեր։

Անասնապահության առանձին ճյուղերի փոփոխությունը, անշուշտ, կատարվել է մանր եղջերավոր անասունների աճի հետևանքով, որի համար Սևանի ավազանում եղել է ավելի նպաստավոր պայմաններ, մանավանդ, որ խոշոր եղջերավոր անասունների ձմեռումը կապված էր որոշ դժվարությունների հետ (անասնակեր հայթայթելու, ձմեռանոցներ պատրաստելու և այլն)։ Իսկ եթե նկատի ունենանք, որ հատկապես քոչվորական և յայլաղային կենցաղով ապրող ցեղերի համար մեծ դժվարությունների հետ էր կապված խոշոր եղջերավոր անասուններին տեղից-տեղ տեղափոխելը, ապա պարզ կդառնա, որ տնտեսության մեջ ավելի արդյունավետ էր մանր եղջերավոր անասնապահությունը։ Դրան նպաստել է նաև այն, որ Սևանի ավազանն ունեցել է ամառային ընդարձակ արոտավայրեր, իսկ ձմեռային՝ համեմատաբար ավելի քիչ, որը բնորոշ է Հայաստանի բոլոր լեռնային ու նախալեռնային շրջաններին։ Այսպես, Հայաստանն ունի 550.000 ամառային և 165.000 հեկտար ձմեռային արոտավայրեր[4]։ Այս հանգամանքն էլ մեծ չափով նպաստել է անասնապահության տարբեր ճյուղերի զարգացմանը։

Սևանի ավազանում մանր եղջերավոր անասնապահությունը առաջնակարգ տեղ է գրավել հատկապես ուշ բրոնզի դարում, երբ արդեն տաք ու խոնավ կլիման փոխվում է չորի, որը համընկնում է հետսառցապատման ժամանակաշրջանի՝ սուբբորելյանի էտապին (3000—500 թթ. մ. թ. ա.) և հավանաբար այս ժամանակաշրջանում է, որ անտառային շերտերը զգալի չափով

---

[4] А. З. Тамамшев. Животноводство. Тифлис, 1930, стр. 113.

կրճատվում են մի կողմից կլիմայի փոփոխման, իսկ մյուս կողմից՝ մետաղ կտրող գործիքների հանդես գալու պատճառով։ Կարելի է ենթադրել, որ Սևանի ավազանի երբեմնի անտառները ոչնչացվել են հենց այս շրջանում, թեև այն գլխավորապես ոչնչացված պետք է լինի երկաթի դարում։ Անշուշտ, կլիմային զուգընթաց, փոփոխություններ են տեղի ունեցել Սևանի ավազանի հնաբնիկների տնտեսության, այդ թվում նաև անասնապահության մեջ, որոնք իրենց հերթին պահանջում էին տնտեսության այս կամ այն ճյուղի ինտենսիվացում։

Բրոնզի դարում Սևանի ավազանի բնիկների զբաղմունքներից մեկն էլ որսորդությունն էր։ Սկզբնական շրջանում (վաղ բրոնզի դարում) անասնապահությանը զուգահեռ նրանք զբաղվել են նաև որսորդությամբ և ձկնորսությամբ։ Ավելի ուշ (զարգացած բրոնզի դարում), երբ ավելացավ խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը և մեծացան հոտերը, որսորդությունն ու ձկնորսությունը դադարեցին սնունդ հայթայթելու գլխավոր աղբյուր լինելուց և ունեցան տնտեսական ավելի պակաս նշանակություն։ Լճի ջրերից ազատված տարածություններից գտնվել են երկու տասնյակից ավելի անտառային եղջերուի գանգեր, վայրի ցուլի գանգոսկրի բեկոր։ Եղջերուի գանգեր կամ առանձին բազմաճյուղ եղջյուրներ են գտնվել նաև Լճաշենի շրջակայքից, Շորժայից, Մազրայից, Զոդից և այլ վայրերից։ Եղջերուի միսն օգտագործվել է որպես սնունդ, իսկ եղջյուրներից պատրաստվել են զանազան առարկաներ, աշխատանքային գործիքներ, զարդեր, հերուններ և այլն։ Այդպիսի գործիքներ են գտնվել Բեշտաշենի (Վրաստան) № 19 դամբարանից[5]։ Թեև դեռևս դրանց նշանակությունը չի պարզվել, սակայն, դատելով այդ գործիքների ձևից, կարելի է ենթադրել, որ դրանք օգտագործվել են կաշվի վերամշակման ժամանակ որպես ծակող գործիքներ՝ հերուններ։

Այս տարածքում զգալի թիվ են կազմում կզաքիսի ոսկորների և գանգերի մնացորդները՝ միայն № 8 դամբարանաբլրից գտնվել է 8 գանգ, իսկ մ. թ. ա. XV—XII դդ. մի շարք դամբարաններից՝ կզաքիսի ոսկորների և գանգերի առանձին բեկորներ։ Կզաքիսի գանգ է գտնվել Նոր Բայազետի (Կամո) Պատաշարի դամբարաններից մեկում[6]։ Որսի համար եղել են նաև վայրի այլ կենդանիներ՝ քարայծյամ, վայրի ոչխար, արջ և այլն։

Լճաշենի դամբարաններում ննջեցյալների հետ թաղված կավամաններից հայտնաբերվել են տարբեր տեսակի թռչունների ոսկորներ, երբեմն նույնիսկ ոսկրակուլտեր[7]։ Ինչպես Լճաշենի, այնպես էլ Սևանի ավազանի ու Հայաստանի տարբեր հնավայրերից գտնվել են բավական մեծ թվով թռչնակերպ արձանիկներ, կախիկներ, իսկ կավամանների վրա՝ փորագրված թռչունների պատկերներ, որոնք անշուշտ թռչնորսությունը վկայող փաստեր են։

Լճաշենի հնագույն ցեղերը զբաղվել են նաև ձկնորսությամբ, որը, հավանաբար, տնտեսության մեջ կարևոր դեր չի ունեցել։ Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել նրանով, որ ձկնորսության համար պայմանները եղել են անբարենպաստ և ձկնորսական տեխնիկան ցածր, որոշ իմաստով էլ

---

[5] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 73.

[6] Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 76։

[7] Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի պեղումները 1956—1965 թթ. (անտիպ)։

այն իրենից ներկայացրել է վտանգավոր զբաղմունք։ Ձկնորսությունը երկրորդական զբաղմունք լինելու հանգամանքով պետք է բացատրել, որ Լճաշենի հարուստ պեղածո նյութերի մեջ անհամեմատ քիչ են հանդիպում ձկան ոսկորներ և ձկնորսական իրեր ու առարկաներ։ Այնուամենայնիվ, Սևանի ավազանի որոշ ցեղերի մոտ ձկնորսությունը եղել է գլխավոր զբաղմունք։ Ամենայն հավանականությամբ, գետերին մոտ գտնվող բնակավայրերում (Կամո, Մարտունի, Բասարգեչար և այլն) ձկնորսությունը համարվել է տնտեսության արդյունավետ ճյուղերից մեկը։

Բրոնզի դարում որսորդությունը կորցնում է իր նախկին նշանակությունը և մսի հայթայթման հիմնական աղբյուրը դառնում է անասնապահությունը։ Սևանի ավազանի բնիկները, հավանաբար, զբաղվել են նաև անասունների փոխանակությամբ, որի մասին կան թեև սուղ, բայց ուշագրավ տեղեկություններ։ Լճաշենի մեծ դամբարանաբլուրներից (մ. թ. ա. XIV—XII դդ.) հայտնաբերված բազմաթիվ խոշոր եղջերավոր անասունների գանգերից 25-ի մասնագիտական ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանցից երեքն ունեն հնդկական ծագում[8]։ Ենթադրվում է, որ դրանք Հնդկաստանից կարող էին հասցվել Իրան կամ Առաջավոր Արևելքի երկրներ և այնտեղից էլ Հայկական լեռնաշխարհն ու հետագայում բուծվել տեղում։ Հնդկաստանից եզներ կարող էին բերվել պղնձի, բրոնզի իրերի, կիսաթանկարժեք քարերի (ագաթ, սարդիոն) և օբսիդիանի հետ փոխանակելով, մի հանգամանք, որը վկայում է հեռավոր երկրների միջև եղած կապի մասին։ Անասնապահության զարգացմանը զուգընթաց զարգանում է նաև ապրանքափոխանակությունը, որը նպաստում էր ընդհանուր մշակույթի զարգացմանն ու փոխներազդմանը։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանում երկրագործությանը զուգընթաց բարձր զարգացման է հասել անասնապահությունը։ Ընդ որում դաշտավայրերում գերակշռել է երկրագործությունը, իսկ լեռնային և կիսալեռնային շրջաններում՝ անասնապահությունը։ Հայտնի է, որ ուրարտական թագավոր Արգիշտի առաջինը (786—764 թթ. մ. թ. ա.) դեպի Նաիրի կատարած արշավանքների ժամանակ որպես ավար վերցրել է 582874 գլուխ ոչխար, 125543 եզ, 10607 ձի, 346 ուղտ և իր հետ տարել է 132.217 մարդ[9]։ Արգիշտիի որդի Սարդուրը (764—730 թթ. մ. թ. ա.) Էրիախի երկրից (Լենինականի շրջան) միայն մեկ տարում որպես ավար տարել է 2.500 ձի, 23300 արջառ, 58100 ոչխար և գերի է վերցրել 61500 մարդ, այդ թվում 26700 կին[10]։ Սարդուր երկրորդը դեպի հյուսիս (հավանաբար նաև Վելիկուխի երկիր՝ Սևանի ավազան—Վ. Ա.) կատարած բազմաթիվ արշավանքներից միայն մեկի ժամանակ Բիայնա է տարել 3500 ձի, 40353 խոշոր եղջերավոր և 214700 մանր եղջերավոր անասուն[11]։ Արձանագրություններում հիշատակված անասունների ավարառության այս փաստերը անասնապահության զարգացման բարձր մակարդակի համոզիչ ապացույցներն են։ Նաիրին Ասորեստանին (մ. թ. ա. VIII դ.), որպես տուրք տարեկան վճարում էր 2000

8 Եզների գանգերի մասնագիտական ուսումնասիրությունը կատարվել է ՀՍՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում (Հ. Մնացականյան, նշվ. աշխ., С. К. Межлумян, նշվ. աշխ.)։

9 Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 260։

10 Նույն տեղում։

11 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 16—33

եզ, 1200 ձի և մեծ քանակությամբ մետաղ[12]։ Քսենոֆոնի վկայությամբ (մ. թ. ա. V դ.) պարսիկները Արևմտյան Հայաստանից այլ տուրքերի հետ միասին վերցնում էին նաև 20000 զամբիկ[13]։ Հասկանալի է, որ ինչպես ուրարտացիները, այնպես էլ օտար նվաճողները Հայաստանից չէին կարող տանել բոլոր անասունները։ Եթե անդամ ընդունենք, որ երեք անասուններից մեկը դարվել է որպես ավար կամ տուրք, դարձյալ կստացվի մի պատկառելի թիվ, որը պատկերացում կտա անասնապահության զարգացման աստիճանի մասին։

Ընդունելով, որ անասնապահությունը Լճաշենում համարվել է տեղաբնիկների գլխավոր զբաղմունքը և կենսամիջոցների հայթայթման հիմնական աղբյուրը, միաժամանակ նշենք, որ տեղացիների մոտ անասունը դարձավ պաշտամունքի առարկա և կենցաղային սովորույթների մի մասը կապվեց նրան մեծարելու, պաշտելու հետ։ Այսպես № 6 դամբարանից գտնվել են մ. թ. ա. XXI—XVIII դդ. վերաբերող երկու եզան գանգեր, որոնք դրված են եղել դամբարանափոսի արևելյան ճակատի պատի անկյուններում՝ դնչերով դեպի վեր։ Դրանց հետ գտնվել են նաև երկու այծի և մեկ ոչխարի գանգեր։ Թաղված կենդանիների կողոսկրերը խումբ-խումբ դրվել են գանգերից առանձին՝ հյուսիսային պատի ուղղությամբ, իսկ կավամանները՝ խառը ձևով։ Գերեզմանափոսից մարդու կմախքի մնացորդներ չեն գտնվել։

№ 123 դամբարանից գտնվել է մի եզան կմախք՝ առջևի աջ և ետևի ձախ ոտքերը ծալած և կճղակներով իրար մոտեցած, իսկ մյուս ոտքերը մեկնած։ Եզան գանգը չի գտնվել։ Նույն դամբարանից հայտնաբերվել են նաև մանր եղջերավոր երկու կենդանիներ, 12 կավամաններ, օբսիդիանից մի նետասլաք և երկթեք շեղբով դաշույն։ Ննջեցյալը գերեզման է դրվել նախօրոք անդամահատվելուց հետո։

№ 14 դամբարանաբլրի գերեզմանափոսի հյուսիս-արևմտյան պատի անկյուններում ևս հայտնվել են դնչերով դեպի վեր դրված եզան գանգեր, որոնց սրունքները գտնվել են գերեզմանի տարբեր տեղերում։ Նույն դամբարանում եղել է նաև ոչխարի ամբողջական կմախք, իսկ մարդու կմախքի հետքեր չեն եղել։ Թաղման այս ձևը նկատվել է նաև №№ 7, 40 և 44 դամբարաններում[14]։

Բ. Ա. Կուֆտինը Թրիալեթիի տասնհինգերորդ դամբարանաբլրից հայտնաբերել է երկու եզան ոսկորների մնացորդ և գանգեր[15]։ Գանգերից մեկը դրված է եղել դամբարանափոսի անկյուններից մեկում, իսկ ոտքերի վերջավորությունները՝ առանձին, Լճաշենի № 6 դամբարանի թաղման ձևով։

Լճաշենի № 7 կրոմլեխում մարդու կմախք չի եղել, բայց գտնվել են երեք ոչխարի ամբողջական կմախքներ և կարմիր օխրայով ներկված խոշոր եղջերավոր անասունի ազդոսկրեր։ Դրանց հետ թաղվել են նաև 54 կավաման։ Սովորաբար նման թաղումները կապված են դիակիզման սովորույթի հետ, որը խոշոր եղջերավոր կենդանու՝ հատկապես եզան կամ ցուլի պաշտամունքի ակնհայտ ապացույցն է։

---

12 Խ. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 260։

13 Նույն տեղում։

14 Հ. Հ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 225։

15 Б. А. Куфтин, նշվ. աշխ.։

Լճաշենի պեղածո նյութերի մեջ կան բազմաթիվ իրեր, որոնք նույնպես կապված են պաշտամունքի հետ։ Այսպես, օրինակ, № 1 դամբարանաբլրի հարուստ ժողովածուի մեջ գտնվել են մի բրոնզեձույլ եզան գլուխ, իսկ №№ 2 և 11 դամբարանաբլուրներից՝ ցուլի գեղեցիկ արձանիկներ։ Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում № 2 դամբարանաբլրից գտնված մարմնեղ ցուլի հաղթական տեսքով արձանիկը։ Հենց առաջին հայացքից նկատվում է, որ այն ուժի ու գեղեցկության խորհրդանիշ է. դա ընդգծելու համար ձուլող վարպետը ցուլին կերտել է շքեղ պատվանդանով։ Պատվանդանի հիմնագոտու վրա, հակադիր դիրքերով կանգնած են գլուխները վեր պահած երկու «պահապան» այծեր։

Ցուլի բրոնզե արձանիկ է գտնվել նաև Ադրբեջանական ՍՍՀ Լենքորանի շրջանից[16]։ Կարծում ենք, վերը նշված փաստերը բավական են ապացուցելու համար, որ ուշ բրոնզի դարում խոշոր եղջերավոր անասունը դարձել էր պաշտամունքի առարկա։ Եզան պաշտամունքը գալիս է խոր հնությունից, որպիսի երևույթը նկատելի է ոչ միայն Հայաստանում, այլև Անդրկովկասի այլ վայրերում։ Ինչ խոսք, տարբեր ժողովուրդների մոտ այն դրսևորվել է ուրույն ձևով, բայց բոլոր դեպքերում այդ պաշտամունքը առաջացել է ինչպես երկրագործության, այնպես էլ տնտեսության մեջ փոխադրոմների ընթացքում նրա կատարած աշխատանքի հետևանքով։ Եզան պաշտամունքը հասել է նույնիսկ ֆետիշացման։ Այսպես, 1954 թ. Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի դամբարաններից մեկում գտնվել է ճակատին եռանկյունաձև անցքով եզան բրոնզե գլուխ։ Ենթադրվում է, որ այդ անցքում դրված է եղել գունավոր քար[17]։ 1905 թ. Ուրմիո լճի Ղարադաղ կոչվող թերակղզում պատահականորեն գտնվել է եզան մումիացված կմախք[18]։ Սղերդի վանքերից մեկում պահվել է սպիտակ մի գոմեշ, որն ունեցել է իր սպասարկող անձնակազմը և օծվել է անուշահոտ յուղերով[19]։ Կիրովականում 1936 թ. պեղումներից նույնպես հայտնաբերվել է եզան մի կմախք[20]։ Պաշտվող եզան դամբարան է բացվել Նոր Բայազետի (Կամո) Մրթբի ձոր կոչվող վայրում, Դեբեդ գետի ձորում, Շեյթանադաղում և այլուր։ Այս ամենը հիմք են տալիս ենթադրելու, որ Լճաշենում անասնապահության զարգացմանը զուգընթաց մեծ տեղ է գրավել անասունների պաշտամունքը։ Այս հանգամանքը չի ժխտում մանր եղջերավոր անասնապահության գերակշիռ դերը ուշ բրոնզի դարում։ Ընդհանրապես, թերևս սա իր հերթին նպաստել է տնտեսության համար անփոխարինելի աշխատանք կատարող (որպես տրանսպորտի միջոց) և միս, կաշի (կովերը նաև կաթնամթերք) տվող կենդանու դերը ըստ արժանվույն գնահատելու։ Ինչ խոսք, սկզբնական շրջանում եղը ծառայել է որպես միս ու կաշի տվող կենդանի, սակայն հետագայում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու ընթացքում նրա դերը մեծացել է որպես քաշող ուժ։ Լճաշենի այն բոլոր մեծ դամբարաններում, որոնցում գտնվել են երկանիվ ու քառանիվ

---

16 Т. А. Биннатов, Земледелие и скотоводство в эпоху бронзы в Азербайджане (автореферат канд. диссертации), М., 1955, стр. 12.

17 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селе Толорс («Краткие сообщения Института истории материальной культуры», 1954, вып. 54. стр. 101).

18 «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», 1921—1922, էջ 20։

19 Նույն տեղում։

20 Կ. Գ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումները Կիրովականում (Արմգա...ի «Տեղեկագիր», 1941, № 3—4, էջ 60)։

սայլեր, թաղված են եղել նաև եղներ, շատերը սայլի մոտ՝ իրենց պատկանելիք տեղում։ Այդ դամբարաններից հայտնաբերված 25 եղների ու ավելի քան 10 ձիերի կմախքների մասնագիտական ուսումնասիրությունից պարզվել է, որ թաղված կենդանիներն օգտագործվել են որպես քաշող ուժ։

Պաշտամունքի առարկա է եղել նաև այծը, որը, հավանաբար, միաժամանակ համարվել է զգոնության խորհրդանիշ, թեև այս կենդանին հայտնի է որպես կայծակի խորհրդանիշ։ Ոչխարների հոտում այծը սովորաբար (առանձնապես արուն) կատարում է ուղեկցողի դեր, որովհետև այծերը վտանգն ավելի շուտ են գդում, քան ոչխարները։ Կարելի է ենթադրել, որ այծերի այս հատկությունն էլ պետք է որոշ դեր կատարած լինի նրանց պաշտամունքի գործում։ Որ այծերը համարվել են պաշտելի կենդանիներ, հաստատվում է մեզ հայտնի ցուլի արձանիկի պատվանդանին կանգնած այծերի օրինակով, թեև սրբացած կենդանու մոտ կդրվեին միայն սուրբ կենդանիների արձանիկներ։ Արթիկի զարգացած բրոնզեդարյան դամբարանից (№ 79) գտնված այծի արձանիկը չափազանց ուշագրավ է իր խարսխաձև պատվանդանով[21]։ Արդյոք պատվանդանի այդ ձևը որևէ խորհրդավորություն չի՞ ներկայացնում՝ կապված հենց այծի պաշտամունքի հետ։ Մայկոպի բրոնզեդարյան դամբարաններից գտնված արծաթե սափորի վրա ձիու, առյուծի, եզան և շան պատկերների հետ մեկտեղ քանդակված են երկու այծեր[22]։ Բայց որքան էլ սուղ լինեն բերված փաստերը, կարծում ենք, բավարար են համոզվելու համար, որ ոչ միայն Սևանի ավազանի նախաբնիկների, այլև շատ ժողովուրդների մոտ այծը եղել է պաշտվող կենդանի։ Թերևս այծադրերի գաղափարը նույնպես կապվում է դրա հետ։

Անասնապահության մեջ կարևոր տեղ է գրավել նաև ձիաբուծությունը։ Լճաշենից և Սևանի ավազանի մյուս հնավայրերից գտնվել են մեծ թվով ձիերի կմախքներ և լծասարքեր, որոնք վկայում են Հայաստանում տնտեսության այդ ճյուղի զարգացած լինելը։ Կանգ չառնելով ձիու դերի ու նշանակության վրա, նշենք, որ Լճաշենի հնաբնիկների տնտեսության մեջ ձին հիմնականում ծառայել է որպես քաշող ուժ, առանձնապես ռազմակառքերին լծելու համար։ Գրեթե այն բոլոր դամբարաններում, որտեղ հայտնաբերվել են ռազմակառքեր, գտնվել են մեկից երկու ձիերի կմախքներ։ Մենք ամենևին էլ այն կարծիքին չենք, որ ձին օգտագործվել է միայն որպես քաշող ուժ։ Անշուշտ ձիու դերը մեծ է եղել նաև փոխադրական այլ աշխատանքներ կատարելիս (հեծնելու, բարձելու), բայց որ ձին անփոխարինելի է եղել ռազմական գործում, դա անվիճելի է։ «Սկսած 1600 թ. (մ. թ. ա.) ասորա-բաբելական, եգիպտական զորաբանակների մեջ կիրառվում են բազմաթիվ երկանիվ ռազմակառքեր, երկու ձի լծած։ Այդ կառքերը, ինչպես վկայում են քարաքանդակ նկարներն ու սեպագիր հուշարձանները, ռազմադաշտում իրենց սրընթաց խոյացումով ու արագ հարձակումով հանկարծակիի էին բերում և շփոթ առաջացնում հետիոտն զորքերի շարքերում, նրանց տրորելով ձիերի սմբակների ու կառքերի խմբերի անիվների տակ»[23]։ Որ Լճաշենի բրոնզեդար-

---

21 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, стр. 133.

22 А. В. Арциховский, Основы археологии, М., 1954, стр. 94.

23 Ս. Ամվելյան, նշվ. աշխ., էջ 268։

յան մարդը նույնպես ձին օգտագործել է ռազմակառքերին լծելու համար, կարելի է հավաստել մի շարք օրինակներով։ Այսպես, Լճաշենի № 1 դամբարանաբլրից գտնված քառանիվ փայտե սայլի ու ռազմակառքի հետ թաղվել է նաև ռազմակառքի բրոնզե նմուշը, որին լծված են երկու ձիեր[24]։ Երկուական ձիեր լծված ռազմակառքի բրոնզե մոդելներ են գտնվել նաև Լճաշենի №№ 9 և 10 դամբարանաբլուրներից[25]։ 1904 թ. Դիլիջանում (Գերեզմանների ձորում) գտնված կենդանազարդ փոքր կճուճի վրա նույնպես պատկերված է ձիանման կենդանիների լծված երկանիվ սայլ[26]։ Լճաշենի ռազմակառքեր պարունակող բոլոր դամբարաններում թաղված ձիերի փաստը ամենացայտուն ապացույցն է այն բանի, որ ձին մեծ դեր է կատարել ռազմական տեխնիկայում։

Այսպիսով, պարզվում է, որ Սևանի ավազանում մ. թ. ա. V հազարամյակում ձևավորվում է յայլաղային անասնապահությունը, մ. թ. ա. II հազարամյակում զարգանում է նստակյաց անասնապահությունը, որը բնիկների տնտեսության գլխավոր զբաղմունքն էր։ Եվ շնորհիվ իրենց կատարած անփոխարինելի դերի, անասունների որոշ տեսակներ դառնում են պաշտամունքի առարկա։

ЖИВОТНОВОДСТВО СЕВАНСКОГО БАССЕЙНА ЭПОХИ БРОНЗЫ

ВАРШАМ АВЕТЯН

Резюме

Начало кочевого животноводства в Севанском бассейне относится к V тысячелетию до н. э., а во II тысячелетии до н. э. животноводство здесь становится основным занятием аборигенов. Высокого развития достигло разведение как крупного, так и мелкого рогатого скота. В жизни и хозяйственной деятельности древнего человека животные играли незаменимую роль, в силу чего они становились также предметом культа и фетишизировались. По материалам раскопок и другим археологическим данным выяснено, что в эпоху бронзы предметом культа являлись корова, бык, буйвол, коза и лошадь, которых хоронили как людей.

---

24 А. О. Мнацаканян, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан («Советская археология», 1960, № 2, стр. 142—143).

25 А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1965 г. («Советская археология», 1957, № 2, стр. 150).

26 *Հ. Մնացականյան, Դամբարանի պեղումները Գոլովինո գյուղում (Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 5, Երևան, 1959, էջ 48)։*